

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

**04.03. 2019թ.**

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

- Ա.Հովսեփյան - մարզպետի տեղակալ  
Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար  
Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Զանազյանը, Ժ.Ղազարյանը,  
Ա.Շահվերդյանը, Հ.Հակոբյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ  
պաշտոնատար անձինք  
Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական

**Օր ա կ ա ր գ ու մ`**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,  
գլխավոր քարտուղարի տեղակալ,  
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում  
կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր:

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

1. **ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`**  
Քաղաքացիների դիմումների քննարկման արդյունքներով կազմված պատասխանները  
հնարավորինս իրականացնել ամբողջական, առարկայական և հարցերի լուծման սպառիչ  
ճանապարհով` քաղաքացիների դժգոհությունները բացառելու նպատակով:
2. **ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական  
զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին, ՀՀ Լոռու**

**մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝**

ա) Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման եռամսյակային պլանային ցուցանիշները կատարելու ուղղությամբ:

բ) Համայնքների ղեկավարների հետ ս/թ մարտի 7-ին նախատեսված քննարկման համար ներկայացնել օրակարգ և ձևակերպել հարցեր, որոնք վերաբերվում են ըստ բնագավառների՝ սեփական եկամուտների հավաքագրմանը, ֆինանսավորմանը, ծրագրերին, նախատեսվող շաբաթօրյակի անցկացմանը, գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը և այլ հարցերին:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝**

ա) Անհրաժեշտ հսկողություն սահմանել Լոռու մարզի 5000-ից ավել բնակչություն ունեցող համայնքներում սոցիալական աշխատողի ընտրության կամ նշանակման նկատմամբ:

բ) Քննարկել և հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել առաջարկություններ Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի գործողությունների և անգործունեության նկատմամբ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան  
Հեռ. 0322 /4-32-99/